«Էդիթ Պրինտ» հրատարակչություն

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա՝ Պատմավեպի ուսուցման առանձնահատկությունները ավագ դպրոցում

Առարկա՝ Հայ գրականություն

Ուսուցիչ՝ Գալստյան Նունե

Դպրոց՝ «Երևանի Խ.Դաշտենցի անվան թիվ 114 ավագ դպրոց» ՊՈԱԿ

Ղեկավար՝ Թամարա Թովմասյան

ԵՐԵՎԱՆ – 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԿՆԱՐԿ

1.1 Պատմավեպ: Պատմողական այս ժանրի դերն ու նշանակությունը՝ որպես «Հայ գրականություն» ուսումնական առարկայի ծրագրային նյութ 6

1.2 Պատմավեպի ուսումնասիրման ազդեցությունը ավագ դպրոցականների արժեքային համակարգի ձևավորման վրա 10

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏ

2.1 Պատմավեպի ուսուցումը համագործակցային մեթոդներով 16

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 20

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ 21

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Աներկբա է, որ գրականությունն իրական կյանքի արտացոլանքն է, և յուրաքանչյուր գրող իր ստեղծագործություններում պատկերում է կյանքի բոլոր գույները, բոլոր կողմերը: Պատահական չէ, որ պատմական որևէ դարաշրջանի քաղաքական, սոցիալական, աշխարհիկ և հոգևոր կյանքին հաղորդակցվելու նկատառումներից ելնելով՝ անչափ կարևոր է հաղորդակից լինել նաև այդ ժամանակաշրջանի գրականությանը:

Պատմականորեն հայ ժողովուրդը միշտ ապրել, հարատևել է՝ առաջնահերթություն համարելով գոյաբանական ու ազգապահպանության խնդիրները, ուստի մեր մշակույթն ու գրականությունը ևս անմասն չեն մնացել պայքարի, մաքառման, գոյատևման ու լինելիության պատկերումներից: Թերևս հայ գրականության մեջ չես գտնի այնպիսի մի բանաստեղծի, արձակագրի, ով չի անդրադարձել հայրենապահպանությանը, ազգային արժեքներին, գոյաբանական խնդիրներին ու ազգային արժեհամակարգին, չի մատնանշել փրկության և ազատության բանաձևումներն ու ցույց տվել իր տեսլականը: Շատերն ընտրել են սրտառուչ պոեզիան, մյուսները՝պատմական վեպերն են սուր ու վահան դարձրել հայրենապահպանության գործում: Այսպիսով, պատմավեպերը հայ գրականության զարդն են, պայքարի, կյանքի փիլիսոփայության, մարդկային ճակատագրի, մարդ ու հայ մնալու պատգամները՝ ուղղված գալիք սերունդներին: Պատմական դժվար ժամանակաշրջաններին անդրադառնալով՝ մեր վիպասանները դարձել են խոսքի ու գաղափարի առաջնորդներ, մարդկային հոգու յուրատեսակ հայելիներ՝ ցույց տալով ժամանակի կարևորագույն անցքերը՝ համեմված արդարությամբ, անարդարությամբ ու խաբեությամբ, արյունով, պայքարով, հայրենասիրությամբ:

Գրականությունն իր կարևորագույն հետքն է թողնում մարդու աշխարհընկալման, աշխարհայացքի ձևավորման վրա՝ դառնալով հասարակության համար հոգևոր և բարոյական արժեքների հսկայական շտեմարան: Գրականությունը աշխարհը հասկանալու, ճանաչելու միջոց է, ոգու և անհատականության դաստիարակության հզոր աղբյուր: Գրական ստեղծագործությունները նաև գործիք են այս կամ այն իրողությանը հնչեղություն տալու, հասարակության լայն շրջանակներին

մեկ գաղափարի շուրջ համախմբելու տեսանկյունից: Հենց այս համատեքստում կարելի է տեղավորել 19-րդ դարի վերջի և 20-րդ դարասկզբի մի շարք պատմավիպասանների գործերը, որոնք ժողովրդին ինքնաճանաչման, համախմբման, անցյալի սխալները գնահատելու և իրականության մեջ ազգային շահը կարևորելու հնարավորություն տվեցին: Ռաֆֆի, Ստեփան Զորյան, Դերենիկ Դեմիրճյան, Ծերենց, Մուրացան: Այս մեծանուն վիպասաններին վիճակված էր ապրել պատմական մի ժամանակաշրջանում, որն օրհասական էր սեփական ժողովրդի համար: Վիպասանները տեսնում էին հասարակ հայ մարդու տանջանքը, ամենօրյա մաքառումն ու դժվար ճակատագիրը, նրանք հասկանում էին, որ օտարի լուծն ու արյունոտ յաթաղանը կախված է մեր բազմաչարչար, բայց մաքառող ու չհանձնվող ժողովրդի լինելիության վրա: Հենց այս մտահոգություններից ելնելով է, որ մեծ լուսավորիչ Խ. Աբովյանի հայրենանվեր գրչից հիսուն տարի անց ազգային հայրենասիրական պոռթկումն իրենց պատմավեպերով կյանքի պիտի կոչեին Ծերենցը, Ռաֆֆին, Ստ. Զորյանը, Դեմիրճյանը, Մուրացանն ու այլք՝ դառնալով դասական պատմավեպերի ռահվիրաները:

Այս պատմավիպասանների անմահ գործերն այսօր էլ շարունակում են կատարել իրենց ուսումնադաստիարակչական կարևոր առաքելությունը: Որպես «Հայ գրականություն» ուսումնական առարկայի ծրագրային նյութ՝ մեծանուն պատմավիպասանների պատմավերպերը ավագ դպրոցականների համար անսպառ հայրենասիրության աղբյուր են, կյանքի դաս: Պատմական անցքերը գեղարվեստորեն ուսումնասիրելով, վերլուծելով, դրանց մասին կարծիք, դիրքորոշում ու վերաբերմունք հայտնելով՝ զարգանում է դպրոցականների քննադատական մտածողությունը. կյանքին, գրականությանն ու պատմությանը վերջիններս նայում են առավել հասուն ու քննող հայացքով: Ուստի և անգնահատելի ենք համարում պատմավեպի՝ որպես ուսումնական նյութի դերը ավագ դպրոցականների կրթության, դաստիարակության, նրանց մեջ ազգային ու համամարդկային արժեքների ձևավորման համատեքստում: Հենց վերը թվարկված հանգամանքների կարևորմամբ ու հրատապությամբ էլ պայմանավորել ենք սույն հետազոտական աշխատանքի թեմայի **արդիականությունը:**

Հետազոտական շխատանքի նպատակն է բացահայտել հայ նշանավոր պատմավեպերի ուսումնական ու դաստիարակչական արժեքն ավագ դպրոցում, նաև դիտարկել դրանց դասավանդման այն մեթոդներն ու եղանակները, որոնց շնորհիվ հնարավոր է ապահովել դասի գործընթացի արդյունավետությունն ու սովորողների համաչափ մասնակցությունը: Սույն աշխատանքի շրջանակներում քննարկվող **խնդիրները** հետևյալն են.

- Ուսումնասիրել պատմական վեպերի ստեղծման դրդապատճառները, պատմական, պատմաքաղաքական հիմքը և առանձնահատկությունները:
- Ընդգծել բովանդակության և գաղափարի անքակտելի կապը՝ ցույց տալով դրանց ուսումնադաստիարակչական նշանակությունը:
- Վեր հանել պատմական փաստերի և անձանց նկատմամբ գրողի ճշմարտացի ընկալումներն ու այդ համատեքստում սովորողների քննադատական մտածողության զարգացման հնարավորությունները:
- Մատնանշել պատմավեպի ուսումնասիրման մանկավարժական արդյունավետ մոտեցումները:

Աշխատանքի մեթոդաբանական հիմքը: Կիրառվել են ինչպես ընդհանուր մեթոդներ՝ տրամաբանական, վերլուծական, այնպես էլ հատուկ մեթոդներ, ինչպիսիք են՝ պատմական, համակարգակառուցվածքային, մեկնաբանման:

Աշխատանքի կառուցվածքը: Աշխատանքը բաղկացած է ներածությունից, տեսական և գործնական մասերից, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկը հրապարակող հատվածից:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԿՆԱՐԿ

1.1Պատմավեպ: Պատմողական այս ժանրի դերն ու նշանակությունը՝ որպես «Հայ գրականություն» ուսումնական առարկայի ծրագրային նյութ

Ցավալի է, սակայն հայ ժողովուրդն իր ողջ գոյության ընթացքում ստիպված է եղել անդադար պայքարել ազատության, գրի ու հավատի պահպանման, գենի ու արյան, լինելիության ու հարատևության համար: 19-րդ դարավերջն ու 20-րդ դարասկիզբը ևս մարտահրավերային էին հայերիս համար: Եվ այդ տեսանկյունից մեր վիպասանների արժեքավոր պատմավեպերը բնավ էլ ժամանակավրեպ չէին, ավելին՝ դրանցում արծարծված հարցերով, պատմական անցքերի նկարագրությամբ ու համակողմանի պատկերմամբ հայ վիպասանները պարարտ հող էին նախապատրաստում ավելի կայուն, ավելի զգոն ու հեռատես հասարակություն ունենալու և հայրենապահպանության ու պետականաշինության հույժ կարևոր գործը արդյունավետ կազմակերպելու համար: Մեր դարավոր պատմությանը հայացք գցելով՝ տեսնում ենք, որ հայ ժողովուրդն իր կազմավորումից ի վեր, բազմաթիվ անգամներ է հայտնվել գոյապահպանման առումով հույժ վտանգավոր և բախտորոշ մի շարք իրավիճակներում: Դա հատկապես տեսանելի է պատմական այն ժամանակահատվածներում, երբ այս հզորագույն էթնոսն ունեցել է պետականության բացակայություն՝ թիրախ դառնալով մի շարք նվաճողների համար, ինչպես նաև այն պարագայում, երբ ինչ-ինչ հանգամանքներում օրախնդիր է եղել նույն այդ պետականության պահպանումն ու ամրապնդումը:

Մի շարք պատմիչներ, նվիրվելով քերթության սրբազույն գործին, սերունդներին են ավանդել իրենց պատմությունները, որոնց մեջ ամփոփված է հայ ժողովրդի ծագումնաբանությունը, մշակույթը, քաղաքական խմորումներն ու վերելքները, խիստ կարևոր ու դարակազմիկ իրադարձությունները, ինչպիսիք են՝ գրերի գյուտը, քրիստոնեության ընդունումն ու մի շարք բախտորոշ պատերազմներ, ազատագրական շարժումներ, գրի, հավատի ու գենի պահպանության համար արյունոտ մաքառումներ: Վերը թվարկվածի հետ մեկտեղ հայ պատմիչների գործերում արժեքավոր են նաև ժամանակագրորեն շարադրված պատմաքաղաքական իրադարձությունները, թագավորական հարստությունների, արքունի անդամների, հոգևոր այրերի և հասարակ ժողովրդի կենսաձևի, վարքի և գործունեության նկարագրությունները,

որոնք անգնահատելի արժեք են հանդիսանում հայ ժողովրդի ինքնաճանաչման գործում:

Խորենացու, Եղիշեի, Ագաթանգեղոսի, Փավստոս Բուզանդի և այլոց մատյաններում համակողմանի նկարագրված է հայ ժողովրդի հաղթական և ողբերգական անցյալը, բազմաշերտ հասարակության նվիրական ցանկություններն ու ձգտումները, մեր պատմական անցյալի ընդգրկուն նկարագիրը: Եվ պատահական չէ, որ դարեր անց, մի շարք գրողներ դիմել են պատմական վեպի օգնությանը, որպեսզի վեր հանեն պատմական անցյալի՝ հիշատակման, հաճախ էլ գովերգման արժանի անցքերը՝ ժողովրդի մեջ հայրենասիրական զգացումներ բորբոքելու, անցյալի սխալները մատնանշելու և պատմական փորձը որպես դաս ընդունելու համար:

«Պատմավեպը վեպի մի տեսակ է, որը կառուցված է պատմական սյուժեի վրա և գեղարվեստական ձևով ներկայացնում է որևէ դարաշրջան, պատմության որոշակի ժամանակահատված: Պատմավեպում ժողովրդի կյանքի այս կամ այն դրվագն է, որը հագեցած է կարևորագույն դեպքերով»[1]: Այս ժանրի ստեղծագործությունների մեջ պատմական իրականությունը համադրվում է գեղարվեստականի հետ, պատմական փաստը՝ գեղարվեստական հնարանքի, իրական պատմական դեմքերը՝ մտացածին կերպարների, իսկ մտացածինը տեղավորվում է նկարագրվող ժամանակահատվածի սահմաններում: Պատմավեպում բոլոր պատմություններն արվում են պատմական իրադարձությունների ֆոնին:

Առաջին իսկական պատմավեպերի հեղինակ և ժանրի հիմնադիր է համարվում անգլիացի գրող Վալտեր Սքոթը: Սքոթը կարողացավ համատեղել պատմական փաստը գեղարվեստական հնարանքի հետ՝ օգտվելով ինչպես ռոմանտիկական, այնպես էլ ռեալիստական պատկերավորման գրական միջոցներից: Այս տեսակը հետագայում անվանվեց «վալտերյան» և մեծ ազդեցություն ունեցավ եվրոպական, ռուսական, ավելի ուշ՝ նաև հայկական գրականության մեջ պատմավեպի զարգացման վրա:

Գեղարվեստական գրականության մյուս ժանրերի համեմատ ՝ պատմավեպի ուսուցումը պահանջում է առավել համակարգված ու նպատակային

[1] Է. Ջրբաշյան , Հ.Մախչանյան: Գրականագիտական բառարան: «Լույս» հրատարակչություն, 1980, էջ 294:

մանկավարժական աշխատանք, քանի որ այս պարագայում գործ ունեք բազմաթիվ խաչվող հասկացությունների, միջառարկայական կապերի հետ: Պատմավեպը նաև ազգային դաստիարակության, ազգային արժեքների և գաղափարախոսության սերմանման հզոր գործոն է, որն իր առանցքային ազդեցությունն է ունենում թե սովորողների հուզական ոլորտի, թե' իմացական և ճանաչողական կարողությունների, թե' պատմական մտածողության ու գեղագիտական հայացքների ձևավորման վրա: Այս ամենը լիովին տեղավորվում է հանրակրթական ոլորտում պետության սահմանած սկզբունքների համատեքստում, որոնց համաձայն. «Հանրակրթության բնագավառում պետական քաղաքականության հենքն ազգային դպրոցն է, որի գլխավոր նպատակը համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության, պետականության և մարդասիրության ոգով դաստիարակված և մասնագիտական կողմնորոշում ունեցող անձի ձևավորումն է[2]»:

Որևէ պատմավեպ ուսումնասիրելուց առաջ ավագ դպրոցականը նախ և առաջ պետք է իմանա գրության շարժառիթը, ուսումնասիրի պատմական տվյալ ժամանակաշրջանի առանցքային քաղաքական ու հասարակական նկարագիրը, ծանոթ լինի սկզբնաղբյուրներին, հեղինակի համոզմունքներին ու հայացքներին: Սա մի շարունակական գործընթաց է, որը պահանջում է մանկավարժական լուրջ աշխատանք, քանի որ չափորոշիչներում ամրագրված վերջնարդյունքը բնավ չի սահմանում մեխանիկական վերարտադրություն, անգիր արված շարադրանք: Սովորողը պետք է կարողանա միջառարկայական կապերով հիմնավորել պատմավեպի կարևորությունը թե' իր ժամանակի, թե՛ այսօրվա իրողությունների համատեքստում, կապ տեսնի սկզբնաղբյուրի և գեղարվեստական շարադրանքի միջև, կարողանա տեսնել շարադրանքի գեղագիտական կողմը, առանձնացնի պատկերավորման միջոցներն ու արտահայտչամիջոցները: Կարևոր է նաև, որ սովորողը ծանոթանա նաև պատմավեպի շուրջ գրաքննական հայացքներին, ինքն էլ գրաքննադատի աչքերով նայի ստեղծագործությանը:

Այսպիսով, պատմավեպի գրական-գեղարվեստական արժեքը հասկանալուց առաջ աշակերտը պետք է գնահատի դրա պատմականությունը,

[2] «Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 4,կետ 2:

արժանահավատությունը: Այդ նպատակով վերջինիս պետք է ծանոթացնել վեպի սկզբնաղբյուրներին: Մեր խնդիրն է հետազոտել վեպի դարաշրջանը, պատմական հիմքը, գրողի տեսակետը պատմության մասին: Գրական երկի ուսումնասիրությունը հնարավորություն կտա հասկանալու տեքստի ենթիմաստը, հեղինակի ասելքը, հերոսների արաքների դրդապատճառները, գրողի՝ տեքստ ստեղծելու վարպետությունը, խոսքի ոճական առանձնահատկությունները: Գրական հերոսների արարքների, բնավորության վերլուծությունը հնարավորություն կտա հասկանալու, ճանաչելու ինքն իրեն և այլ մարդկանց: Այս ամենի շնորհիվ սովորողը կկարողանա կյանքում հարաբերություններ հաստատել, ճիշտ հաղորդակցվել և համագործակցել մարդկանց հետ: Տարբեր ոճերի տեքստերի մանրազնին ուսումնասիրումը կհանգեցնի գլխավոր նպատակադրման իրականացմանը, այն է՝ բանավոր և գրավոր խոսքի առկայություն, մշտական զարգացում և կատարելագործում[3]:



Իրենց դաստիարակչական արժեքով աչքի են ընկնում Ռաֆֆու պատմավեպերը՝ «Սամվել», «Դավիթ Բեկ», «Խենթը» և մնացյալը, Դ. Դեմիրճյանի «Վարդանանք»

[3] Հանրակրթական դպրոցում գրականության ուսումնառության ՀԱՅԵՑԱԿԱՐԳ: https://escs.am/files/files/2020-07-17/5274af14a6831d415b35417b59d851a7.pdf

արժեքավոր վեպը, Ստ. Զորյանի եռագրությունը՝ «Հայոց բերդը», «Վարազդատ», «Պապ թագավոր», Մուրացանի «Գևորգ Մարզպետունի» վեպը, Ծերենցի եռագրությունը՝«Թորոս Լևոնի», «Երկունք Թ դարու» և «Թեոդորոս Ռշտունի», Սուրեն Այվազյանի «Ճակատագիրն հայոց» պատմավեպը, Սերո Խանզադյանի «Մխիթար Սպարապետ» վեպը, Հայկ Խաչատրյանի «Տիգրան Մեծ» վեպը: Նշված պատմավեպերն իրենց անգնահատելի դաստիարակչական նշանակությունն ունեն որպես ուսումնական նյութ և մեծապես օժանդակում են պատասխանատու, հայրենասեր, գիտակից ու կշռադատող քաղաքացու ձևավորմանը:

Այսպիսով, կարծում ենք, որ պատմավեպերի ուսումնասիրումն անփոխարինելի է հատկապես ավագ դպրոցում՝ պայմանավորված նշված տարիքային խմբի սովորողների համար առարկայական չափորոշիչներով սահմանված պահանջներով, համաձայն որոնց՝ պետք է սովորողների մեջ ձևավորել քննադատական ու ստեղծագործական մտածողություն, արժեք, վերաբերմունք ուսումնական նյութի նկատմամբ, միջառարկայականության գիտակցում, պատճառահետևանքային կապերի բացահայտում, սեփական կարծիքը հայտնելու կարողություն:

1.2 Պատմավեպի ուսումնասիրման ազդեցությունը ավագ դպրոցականների արժեքային համակարգի ձևավորման վրա

Սովորողների արժեքային համակարգի, բարձր մարդկային որակների ձևավորումը շարունակական գործընթաց է, որն անդադար իրականացվում է դասի գործընթացի ընթացքում՝ ուսումնական ծրագրերի բովանդակության միջոցով: Այս արժեքները խիստ կարևոր են թե' անհատի, թե' հասարակության համար, ուստի դպրոցի առաջնային առաքելությունն է կիրթ, մարդասեր, հոգևոր արժեքներով հարուստ, ակտիվ, բարձր բարոյականության տեր, իր հայրենիքը սիրող մարդու դաստիարակությունը: Դպրոցի դաստիարակչական գործառույթն ուղղված է նրան, որ սովորողը հասկանա, որ յուրաքանչյուր ուսումնական առարկա ունակ է իրեն տալ բարձր բարոյական արժեքներ ու մարդկային որակներ, որոնք կապահովեն իր սոցիալականացումը, ինտեգրումը հասարակական կյանքին: Նկատենք, սակայն, որ դպրոցի համար այդ նպատակին հասնելը հեշտ չէ՝ պայմանավորված նոր աշխարհի արագ զարգացումներով և բազմաթիվ դեպքերում՝ արժեհամակարգի

խեղաթյուրմամբ, տեղեկատվական անվերահսկելի հոսքերի առկայությամբ: Հենց այստեղ է, որ հիմնախնդիրն օրակարգային է դարձել և հարկ է, որ սովորողների մեջ ազգային ու համամարդկային արժեքներն ու դրանց նկատմամբ կշռադատված վերաբերմունքը ձևավորվի ժամանակին ու արդյունավետ եղանակով:

Հայ գրականություն առարկայի ուսուցչի վրա ևս մեծ պատասխանատվություն է դրված, քանի որ գեղարվեստական գրականության մեջ կարելի է գտնել մի շարք հարցերի պատասխաններ, կարելի է սովորողներին առարկայական ու տեսանելի կերպով մատնացույց անել կյանքի լավ ու վատ կողմերը, մարդկային տեսակի ընդունելի ու դատապարտելի առանցքները, պատմական հիշարժան անցքերը, որոնք ունեն դաստիարակչական մեծ արժեք: Հենց գրականության միջոցով է հնարավոր սովորողներին հաղորդել մարդկային էության ամենաթաքնված կողմերը՝ մատնացույց անելով կյանքի դրական ու բացասական տողատակերը:

Այս համատեքստում «Հայ գրականություն» ուսումնական առարկայի դասավանդման շրջանակներում իր տեղն ու դիրքն ունեն պատմական վեպերը, որոնք իրենց թեմատիկ ու կառուցվածքային առանձնահատկություններով, լեզվի ոճավորման ու պատկերավորման միջոցներով, հերոսների կերպարային դրսևորումներով կարող են ունենալ ինչպես ուսումնական, այնպես էլ դաստիարակչական մեծ արժեք: Այսպիսով, կարող ենք աներկբայորեն փաստել, որ գրականության ուսուցչի առաջ կանգնած է առարկայի ուսուցման ընթացքում դասընթացի նյութերի, այդ թվում՝ պատմավեպերի ուսումնասիրության միջոցով սովորողների մեջ ձևավորել քննադատական մտածողություն, ազգային ու համամարդկային արժեքներ, անկախ դիրքորոշումներ ու կարծիք հայտնելու կարողություն:

Անհնար է կատարելագործվել, հաջողություններ և հաղթանակներ ունենալ կյանքում, երբ թերի է անձի դաստիարակությունը, արժեքային համակարգը չունի կայուն հիմքեր: Այս ամենը, անշուշտ, մարդը ձեռք է բերում իր գիտակցական կյանքի ընթացքում: Գաղտնիք չէ՝ գրականությունն իր կարևորագույն հետքն է թողնում մարդու աշխարհընկալման, աշխարհայացքի ձևավորման վրա՝ դառնալով հասարակության համար հոգևոր և բարոյական արժեքների հսկայական շտեմարան: Գրականությունը աշխարհը հասկանալու, ճանաչելու միջոց է, ոգու և

անհատականության դաստիարակության հզոր աղբյուր: Իսկ ահա պատմավեպերի ուսումնասիրումն ավագ դպրոցում մեծապես օգնում է սովորողների մտահորիզոնի ու ճանաչողության զարգացմանը, ծառայում է վերջիններիս ազգային ու բարոյական դաստիարակությանը, պատմական մտածողության ընդլայնմանը: Անձի արժեքային համակարգի ձևավորման և շարժընթացի խնդիրը ընդունված է դիտարկել հոգեկան զարգացման ընդհանուր օրինաչափությունների համատեքստում: Այն անմիջականորեն կապված է տարիքային զարգացման առանձնահատկությունների հետ: Վերլուծելով անձի իմաստային ոլորտի ձևավորման և զարգացման խնդիրը՝ Դ. Լեոնտևը նշում է, որ յուրաքանչյուր անձի զարգացման գործընթաց բնութագրվում է սոցիալական հանրության արժեքների և դրանց փոխակերպումների, այսինքն՝ անձնային արժեքների կերպափոխմամբ[4]: Գեղարվեստական ստեղծագործությունը՝ որպես գրողի գործունեության արդյունք, արտացոլում է իր իսկ հեղինակի, նրա գործող անձանց հասարակական հոգեբանությունը, որն իր հերթին բացվում է գրողի և նրա ստեղծած կերպարների միջոցով»[5]:

Ի վերջո, գեղարվեստական ստեղծագործությունը միջոց է, որով հեղինակը ձգտում է արտահայտել իր վերաբերմունքը իրականության նկատմամբ և փորձում է նույնպիսի վերաբերմունք արթնացնել նաև ընթերցողի մեջ: Այսպես հեղինակային ներկայության և ակտիվության միագիծ շարժման փոխարեն առաջանում է իրականության գեղագիտական ընկալման հավասարարժեք գոյություններով եռանձնյա կառուցվածք՝ գրող-կերպար-ընթերցող: Գեղարվեստական պատկերների բացահայտման, կերպարների կերտման յուրահատկության միջոցով գրական երկերի հեղինակները ցույց են տալիս բարու, չարի, ճշմարտության, կեղծիքի, իրականի և խաբկանքի սահմանները: Իրականությունն ու մարդկային հարաբերությունները դիտելով բարոյականության չափանիշով՝ գրականությունը սովորողի համար տեսանելի է դարձնում մարդկային մտքի, հոգու, զգացմունքի, դրանց բարոյական չափանիշայնության ուժը:

---

[4] Леонтев Д. А, «Развитие личностных ценностей в общественном контексте» Вестник Московского Университета,1997. №1. сс. 20-27.

[5] Иезуитов А. Н., Литература как идеология // «Методологические вопросы науки о литературе», Ленинград, 1984, с. 11.

Հենվելով մեր մանկավարժական փորձի վրա՝ նկատենք, որ պատմավեպերի ուսումնասիրության ընթացքը մեծ ոգևորություն է առաջացնում ավագ դպրոցականների շրջանում: Սկզբի համար անչափ կարևոր է, որ դպրոցականներն ընթերցեն բնագիրը, կատարեն որոշակի մշակումներ, առանձնացնեն գլխավոր և երկրորդական կերպարները, ծանոթանան պատմական հենքին ու սկզբնաղբյուրին: Դասի պլանավորման ընթացքում մշտապես հաշվի ենք առնում դպրոցականների տարիքային և անձնային առանձնահատկությունները: Որպես կանոն՝ ավագ դպրոցում սովորողներն ավելի ինքնուրույն են, սիրում են հետազոտել, ինքնուրույն տեղեկություններ հավաքել, համագործակցել դասընկերների հետ: Ուստի փորձում ենք շեշտը դնել ուսուցման համագործակցային մեթոդների վրա, ինչը ենթադրում է, որ սովորողները կարող են համագործակցել միմյանց հետ, օգնել իրար և թիմային աշխատանքով կատարել առաջադրանքը: Համագործակցային ուսուցման տեխնոլոգիան 20-րդ դարի 80-ական թվականներից սկսեց լայն տարածում գտնել: Այս տեխնոլոգիայի ծագման, զարգացման հիմքում ինովացիոն գործընթացներ են, որոնք դիտարկել են մի շարք նորարար մանկավարժներ՝ Կ.Դ. Ուշինսկին, Ն.Պ. Պիրոգովը, Լ.Ն. Տոլստոյը, Ս.Տ. Շացկին, Յա. Կորչակը, Կ. Ռոջերսը և այլք: Համագործակցային ուսուցումը լայն տարածում է գտել աշխարհում: Այն ավելի ու ավելի է կիրառվում՝ որպես աշխատանքային, դասավանդման և ուսուցման նոր մոտեցում և ռազմավարություն: Համագործակցային ուսուցումը խմբային աշխատանքի առավել բարձր աստիճանն է, որը ենթադրում է խմբային աշխատանքի որոշակի նոր մշակույթի ձևավորում: Այն ընձեռում է հնարավորություններ բազմաբնույթ կրթական նպատակներին հասնելու համար, ինչպիսիք են ակադեմիական հասկացությունների, սկզբունքների և իրադարձությունների ընկալումը, միջանձնային հմտությունների զարգացումը և այլն[6]: Այս պարագայում դպրացականները համատեղ ուժերով ուսումնասիրում են, հետազոտություններ կատարում, արտահայտում իրենց վերաբերմունքն ու կարծիքները: Համագործակցային մեթոդների կիրառությունը օգնում է նաև, որ սովորողների մոտ զարգանա կոլեկտիվ մտածողություն, համացանցային հարթակներից, բնագրերից,

[6] Ս. , Բայաթյան Ն. , Ալեքսանյան Լ. , Պուրուկուրու Վ. Համագործակցային ուսուցում. Ձեռնարկ, Երևան: «Անտարես»: 2006, էջ 4:

ակադեմիական գրականությունից համապատասխան գիտելիքների արդյունավետ հավաքագրում, մշակում և ինքնուրույն եզրահանգումներ կատարելու կարողություն: Այս մանկավարժական մոտեցման մեջ շատ կարևոր է ուսուցչի ուղղորդող դերը, քանի որ այս մեթոդների կիրառման ընթացքում սովորողները համագործակցում են ոչ միայն ուսուցչի, այլև միմյանց հետ:

Համագործակցային ուսուցում



Պատմավեպերի ուսումնասիրման շրջանակներում կրթադաստիարակչական գործառույթն արդյունավետ իրականացնելու համար կիրառում ենք հետևյալ համագործակցային մեթոդները՝ «Մտագրոհ», «Պրիզմա», «Գաղափարների քարտեզ», «Վեննի դիագրամ», «Խճանկար», և այլն: Հարկ է նկատել, որ պատմավեպի բովանդակային, իմաստային առանձնահատկությունները լավ ըմբռնելու համար սովորողներին մեծապես օգնում է լեզվի ոճավորման ու պատկերավորման միջոցների ուսումնասիրությունը: Այս ուսումնասիրությունը նպաստում է, որ սովորողները խորքային կերպով ընկալեն դարեր առաջ ապրող մարդու հոգեվիճակը, ձգտումներն ու երազանքները, շահերն ու տեսլականը, հասկանան, թե ինչ դրդապատճառներ է ունեցել հեղինակը կերպարների կերտման, բնանկարի և դիմանկարի պատկերման համար: Կարծում ենք, որ պատմավեպերի ուսումնասիրության ընթացքում առավել քան հնարավոր է արժեքավոր սերմեր տալ սովորողներին, ցույց տալ կյանքի փիլիսոփայությունը, ինչպիսին լինելու և չլինելու բանաձևը, ծանոթացնել մեր պատմական անցյալին և դրա գեղարվեստական արտացոլանքին: Ուսումնական գործընթացում ապահովելով առողջ մասնակցային միջավայր՝ պայմաններ ենք ստեղծում, որ սովորողները հնարավորություն ունենան կարծիք, դիրքորոշում հայտնելու, կերպարների մասին իրենց զգացածն արտահայտելու, հատկանշավորելու: Մեծ ուշադրություն ենք դարձնում նաև դասին կիրառվող դիդակտիկ նյութերին,

զննական պարագաներին, ապահովում ենք ՏՀՏ-ների կիրառությունը, ստեղծում ենք միջառարկայական կապեր տարբեր առարկաների և արվեստի տեսակների միջև՝ նպատակ ունենալով ոչ միայն պատմել, այլ նաև ցույց տալ, պայմաններ ստեղծել կիրառելու, հետազոտելու, բացահայտելու համար: Ստացվում է, որ դասի առանցքում հայտնվում է հենց սովորողը, ում համար հնարավորություն ենք ապահովում ինքնուրույն գործելու, նախաձեռնողի դերում հանդես գալու, ստողծագործական աշխատանք կատարելու: «Մանկավարժական աշխատողը պարտավոր է սովորողների մեջ զարգացնել ինքնուրույնություն, նախաձեռնություն և ստեղծագործական ունակություններ»[7]:

Այսպիսով պատմավեպերի ուսումնասիրման ժամանակ նախապատվություն տալով ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաներին՝ սովորողներին հնարավորություն ենք տալիս, որ գրական երկի մեջ առկա խրատները, բարոյական դասերը, լավ ու վատ արժեքները ինքնուրույն տեսնեն ու գնահատեն:

[7] «Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 28:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏ

2.1Պատմավեպի ուսուցումը համագործակցային մեթոդներով

Հենվելով մեր մանկավարժական փորձի վրա՝ դիտարկենք ուսուցման համագործակցային մեթոդների օգնությամբ Ստ. Զորյանի «Հայոց բերդը» պատմավեպի ուսուցման արդյունավետ եղանակները: Դասավանդման ընթացքում սովորողների ինքնուրույն խոսքի ձևավորման, պատմական ու քննադատական մտածողության զարգացման, դիրքորոշում, կարծիք, վերաբերմունք և բարձր արժեքային համակարգ ձևավորելու նկատառումներից ելնելով՝ դիտարկենք «Կենտրոններով աշխատանք» համագործակցային հնարի կիրառման օրինակ:

Նախօրոք կստեղծվեն 4-5 հոգուց բաղկացած խմբեր, որոնք կստանան հստակ առաջադրանքներ և 30 րոպե ժամանակ՝ նշված առաջադրանքները կատարելու համար: Նկատենք, որ սովորողները հնարավորություն կունենան օգտվելու բնագրից, օժանդակ գրքերից, համացանցային տեղեկատվական հարթակներից: Ձևավորված կենտրոնները չորսն են.



ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՈՒՄ

- Բացահայտողների կենտրոնում աշխատողները ընթերցում են բնագրից առանձին հատվածներ, կատարում նշումներ, վեր հանում հիմնական միտքը, ենթատեքստը, կապ ապահովում «Հայոց պատմություն» առարկայի հետ՝ առանձնացնելով խաչվող հասկացությունները:
- Հետազոտողների կենտրոնում ընդգրկված սովորողները ընթերցում են առանձնացված հատվածները և, օգտվելով այդ պահին ձեռքի տակ եղած այլ աղբյուրներից՝ համացանց, գրականություն, փորձում են լրացուցիչ խաչվող նյութեր հայթայթել տեքստի վերաբերյալ:
- Ստեղծագործողների կենտրոնի մասնակիցները, տեքստի առանձնահատկություններից ելնելով, փորձում են այն որևէ կերպ վերարտադրել և ներկայացնել, օրինակ՝ բեմականացում, պաստառի պատրաստում, սահիկաշար՝ շեշտը դնելով առանցքային կերպարների ցուցադրման վրա:
- Գրավոր աշխատանքի կենտրոնում ընդգրկված սովորողները ընթերցում ենառանձնացված հատվածը և ուսումնասիրում գրողի լեզուն՝ ոճավորման միջոցներ, բառային շերտ՝ հնաբանություններ, բարբառային բառեր և այլն: Այս խմբի սովորողները պատրաստում են զեկուցում:

Վերջում յուրաքանչյուր կենտրոն ամփոփում է իր կատարած աշխատանքն ու գնահատվում: Ստացվեց, որ գիտելիքի յուրացմանը զուգահեռ այս հնարի կիրառումը սովորողի մեջ զարգացրեց մի շարք նոր հմտություններ, կարողություններ ու որակներ, որոնցից են՝

- թիմում աշխատելու կարողություն,
- հաղորդակցվելու հմտություն,
- թիմային աշխատանքում պատասխանատու լինելու գիտակցում,
- ինքնուրույնություն, նախաձեռնողականություն,
- անսպասելի իրավիճակում կողմնորոշվելու կարողություն,
- համացանցային հարթակում կողմնորոշվելու, համապատասխան տեղեկատվությունը համակարգելու կարողություն,
- փոխգործակցելու կարողություն,
- աշխատանքին ստեղծագործաբար մոտենալու հմտություն:

Որպեսզի կիրառվող մեթոդական շղթան տա դրական արդյունք, հարկավոր է կառավարելի դարձնել սովորողի ուշադրությունը, ամեն կերպ հետաքրքրել նրան, բերել վերջինիս դեպի դասը: Ստ. Զորյանի «Հայոց բերդը» պատմավեպի կերպարների բնութագրման համար կարելի է իրականացնել նաև խմբային եղանակով քարտային աշխատանք: Յուրաքանչյուր խմբի կտրամադրվեն քարտեր հետևյալ հարցադրումներով.

ԽՈՒՄԲ 1

- **Ո՞ր պատմիչներն են հանդիսացել սկզնաղբյուրներ՝ «Հայոց բերդը» պատմավեպի համար:**
- **Արդյոք Արշակ թագավորի կերպարը կերտելով՝ հեղինակը գլխավոր ուղղություն է մատնանշել վերջինիս ինքնուրույն, կենտրոնացած պետականություն ստեղծելու ջանքերը:**
- **Զորյանի մեկնաբանությամբ ինչպիսի՞ պետական գործիչ էր Արշակը:**
- **Վեպում արդյոք տեսանելի՞ է թագավորի և հոգևոր դասի առճակատումը, կապե՛ք «Հայոց պատմություն» առարկայի հետ և մեկնաբանե՛ք:**
- **Զորյանն արդյոք հավատարի՞մ էր Խորենացու և Բուզանդի պատմություններին, մեկնաբանե՛ք և հիմնավորե՛ք:**
- **Ինչպե՞ս կբնութագրեք կենտրոնախույս նախարարներին:**

ԽՈՒՄԲ 2

- **Արշակ թագավորն արդյոք դասեր քաղե՞լ էր իր նախնիներից:**
- **Մեկնաբանե՛ք պատմավեպում առկա դավաճանության, ուխտադրժության, նենգ գործարքների, եղբայրասպանության, հավատազանցության դրվագներն ու հայտնե՛ք դիրքորոշում:**
- **Արդյոք Արշակ թագավորը մենա՞կ էր մնացել իր ցավի հետ:**
- **Խոսե՛ք միաբանման ու համախմբման պակասից, ինչպե՞ս կբնութագրեք ներքին խժդժությունները:**
- **Ներսես կաթողիկոսի կերպարը վեպում արդյոք ունի՞ ընդգծված տարբերություններ պատմիչների նկարագրությունների համեմատ:**

- **Արդյոք Արշակի կերպարի դիպուկ պատկերելու համար հեղինակը հեռացե՞լ է պատմական անձի նկարագրից:**

Սովորողները խմբի ներսում կքննարկեն, կգան ընդհանուր եզրահանգման և կներկայացնեն իրենց պատասխանները: Այսպես ուսուցիչը նպաստում է սովորողների մտածողության զարգացմանը, ճանաչողության, դատողականության կարողությունների և հմտությունների ձևավորմանը, սովորողները սովորում են աշխատել թիմով, միասին գալ ընդհանուր հայտարարի, կատարել եզրահանգումներ: Արդյունքում զարգանում է նաև սովորել սովորելու, ինքնաճանաչման, թվային գրագիտության կարողունակությունները[8]: Ուսուցման գործընթացում կարևորվում է յուրաքանչյուրի կարծիքը: Սա ուսուցում է գործունեության մեջ, իսկ ուսումնական գործունեությունը ենթադրում է անձի զարգացում: Քննադատական վերլուծությունը, կերպարների համադրումն ու հակադրումը սովորողի մեջ ձևավորում են սոցիալական մի շարք կարողունակություններ՝ դրսևորել հարգանք, ազնվություն, պատասխանատվություն ինչպես սեփական անձի, այնպես էլ մյուսների հանդեպ: Կարելի է սովորողներին առաջարկել մտագրոհի միջոցով գրատախտակին գրել հերոսներին բնութագրող բառեր և բառակապացություններ, կազմել հասկացությունների քարտեզ, որը թույլ կտա համակարգել գիտելիքները, հանդես գալ սեփական դիրքորոշումներով: Դասն ամփոփելու համար կարելի է կիրառել «Քառաբաժան», «ԳՈՒՍ» մեթոդները:

Կարծում ենք, որ մեր կողմից մատնանշվող մանկավարժական մոտեցումները իսկապես կաշխատեն, եթե ուսուցիչը դասը պլանավորելիս հաշվի առնի սովորողների անհատական կարիքները, առանձնահատկությունները, օժտվածության մակարդակը: Կարևոր հանգամանք է նաև դասը պլանավորել՝ հիմք ընդունելով չափորոշչային պահանջներն ու սկզբունքները, միջառարկայական կապերի ապահովման հնարավորությունները:

[8] ՀՀ Կառավարության՝ 4 փետրվարի 2021 թվականի N 136-Ն որոշում:

Այս պատասխանատու մոտեցումը թույլ կտա, որ ձևավորվի առողջ մրցակցային միջավայր, որտեղ յուրաքանչյուր սովորող ունակ կլինի տեսնել արժեքներ, լավ ու դրական օրինակներ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Կրթությունը և հատկապես «Գրականություն» առարկան պարտավորվում են սերմանել ու ցանկացած իրավիճակում անսասան պահել մարդկային բարձրագույն արժեքները, գիտելիքների հաղորդման և կարողունակությունների ձևավորման ընթացքում վեր հանել բարոյականը, գեղեցիկը, վեհը: Յուրաքանչյուր ուսուցչի մեծագույն ցանկությունն է, որ ամենադիպուկ ու կարևոր հատկանիշների մասին սովորողը խոսի գրական ճիշտ ու գեղեցիկ հայերենով, կարողանա անդրադառնալ, արձագանքել, համեմատել, հակադրել կերպարներն ու հանգամանքները, եզրակացություններ անել: Ուսուցչի ակտիվ կենսական դիրքորոշումը, նրա գիտելիքների ու հետաքրքրությունների լայնույթը, ուսումնական նյութի շարադրման բարձր մակարդակը շատ առումներով կապահովեն ուսուցման ու դաստիարակչական աշխատանքի հաջողությունը: Կարևոր է սովորողներին ծանոթացնել աշխատանքի արդյունքները մարդկանց պրակտիկ կարիքներին ծառայեցնելուն, գրական կերպարների օգնությամբ վերջիններիս մոտ ձևավորել բարձր քաղաքացիական, սոցիալական ու պատմական պատկերացումներ, ցույց տալ անձի բարոյական հիմքերի առաջնահերթությունը, ամրապնդել սովորողների գեղագիտական, հոգևոր դաստիարակության հիմքերը, զարգացնել հուզական ոլորտը:

Փորձենք ընդհանրացնել մեր կատարած եզրահանգումները.

- Ժամանակի մարտահրավերներով պայմանավորված՝ ուսուցիչը պետք է ուսուցման նպատակների մեջ անպայման ունենա նաև դաստիարակչական բաղադրիչներ:
- Սովորողի համար պետք է ստեղծել այնպիսի միջավայր, որտեղ նա իրեն պահանջված ու կարևոր կզգա և բաց կլինի համագործակցության ու կարծիքների փոխանակման համար:

- Պատմավեպերի ուսուցման ընթացքում պետք է զերծ մնալ մեխանիկական վերարտադրումներից՝ շեշտը դնելով կարողունակությունների զարգացման, արժեքների, դիրքորոշումների, համոզմունքների և վերաբերմունքի ձևավորման վրա:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. «Հանրակրթության մասին» ՀՀ օրենք:
2. ՀՀ Կառավարության՝ 4 փետրվարի 2021 թվականի N 136-Ն որոշում:
3. Հանրակրթական դպրոցում գրականության ուսումնառության ՀԱՅԵՑԱԿԱՐԳ: https://escs.am/files/files/2020-07-17/5274af14a6831d415b35417b59d851a7.pdf
4. Է. Զրբաշյան , Հ.Մախչանյան: Գրականագիտական բառարան: «Լույս» հրատարակչություն, 1980:
5. Ս. , Բայաթյան Ն. , Ալեքսանյան Լ. , Պուրուկուրու Վ. Համագործակցային ուսուցում. Ձեռնարկ, Երևան: «Անտարես»: 2006
6. Леонтев Д. А, «Развитие личностных ценностей в общественном контексте» Вестник Московского Университета,1997.
7. Иезуитов А. Н., Литература как идеология // «Методологические вопросы науки о литературе», Ленинград, 1984.